**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 01/09.1/5445-2026**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Ձեզ են ուղարկվում Տեղեկատվական համակարգերի կառավարման հանձնաժողովի անդամի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրված թեկնածուի տվյալները և վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

Առդիր՝ 1 խտանիշք:

Հարգանքով՝

**ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2026 թվականի N 185-Ա

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասի 3-րդ կետով և 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի առաջին կազմի չորս տարի պաշտոնավարման ժամկետով անդամի պաշտոնում առաջադրել Նաիրի Ադամյանի թեկնածությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Նաիրի Ադամյան**

Ես՝ Նաիրի Ադամյանս, ծնվել եմ 1992 թվականի օգոստոսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Վանաձոր քաղաքում: Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ:

2009–2013 թվականներին սովորել և ավարտել եմ Երևանի պետական համալսարանի Կառավարման ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան: 2015–2017 թվականներին շարունակել եմ ուսումս նույն համալսարանում՝ Ինովացիաների կառավարման մասնագիտությամբ և ստացել մագիստրոսի աստիճան:

Ունեմ ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ, այդ թվում՝ ավելի քան 7 տարի ղեկավար, կազմակերպման, վերահսկման և համակարգման գործառույթներ ունեցող պաշտոններում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և թվային համակարգերի կառավարման ոլորտում:

2024 թվականի օգոստոսից զբաղեցնում եմ «Հայփոստ» ՓԲԸ գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և ֆինանսական ծառայությունների գծով: Իմ պատասխանատվության շրջանակում է կազմակերպության ՏՏ ենթակառուցվածքների ռազմավարական պլանավորումը և զարգացումը, սերվերային, ցանցային և ծրագրային համակարգերի կառավարման համակարգումը, թվային փոխակերպման ծրագրերի նախաձեռնությունն ու իրականացումը, տեխնոլոգիական ռիսկերի կառավարումը, ինչպես նաև միջգերատեսչական և կազմակերպական մակարդակում համագործակցության համակարգումը:

2023 թվականի մարտից մինչև 2024 թվականի օգոստոսը աշխատել եմ «Հայաստանի Մանուկներ հիմնադրամ» (ՔՈԱՖ)-ում՝ որպես Լոռիի ՍՄԱՐԹ ավանի ենթակառուցվածքների ղեկավար և տնօրինության անդամ: Իմ գործունեությունը ներառել է թվային և ֆիզիկական ենթակառուցվածքների կառավարում, թվայնացման և ինստիտուցիոնալ գործընթացների ներդրում, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի միջև համագործակցության համակարգում Լոռու մարզում, ինչպես նաև՝ Հիմնադրամի կողմից իրականացվող մի շարք ռազմավարական ծրագրերի իրականացման վերահսկողություն:

2017 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի մարտը աշխատել եմ «Ինեկո Գրուպ» ՓԲԸ կազմում գտնվող «Ինեկոբանկ» ՓԲԸ և «Հայվեյ» ՓԲԸ ընկերություններում՝ զբաղեցնելով թվային բանկային պրոդուկտների մշակման և տեխնոլոգիական զարգացման

ոլորտներում պատասխանատու պաշտոններ: Աշխատանքային պարտականություններիս շրջանակում իրականացրել եմ ՀՀ-ում առաջատար թվային բանկային ծառայությունների մշակման և ներդրման համակարգում, վճարային և ֆինանսական տեխնոլոգիական լուծումների ներդրում, պրոդուկտների պորտֆելների ռազմավարական կառավարում, տեխնիկական և բիզնես ստորաբաժանումների աշխատանքների համադրում, ինչպես նաև կարգավորիչ պահանջների կիրարկման ապահովում:

Մասնագիտական գործունեության հիմնական ուղղվածությունն է՝ թվային համակարգերի ռազմավարական պլանավորումը, տեխնիկական պրոդուկտների պորտֆելների կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման մոդելների մշակումը, բիզնես գործընթացների քարտեզագրումը և համակարգային ճարտարապետության ձևավորումը, ինչպես նաև միջգերատեսչական և բազմաշերտ համակարգերի համադրումը:

Զինապարտ եմ, ծառայել եմ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում 2013–2015 թվականներին:

Ամուսնացած չեմ:

ՆԱԻՐԻ ԱԴԱՄՅԱՆ

16.02.2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարան

(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

# ԴԻՊԼՈՄ

AB № 172691

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ

մայիսի «25»-ի ՈՐՈՇՄԱՄԲ

Նաիրի Նորիկի Ադամյանին

(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է

կառավարման

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԱՍՏԻՃԱՆ

«Կառավարում»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

«16» հուլիսի 2013 թ. ք. Երևան Գրանցման № 113110

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ереванский государственный университет

(наименование высшего учебного заведения)

# ДИПЛОМ

АВ № 172691

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ

от "25" мая 2013 года

Адамяну Наири Нориковичу

(фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ БАКАЛАВРА

менеджмента

ПО СПЕЦИАЛЬНОСТИ

"Менеджмент"

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

М.П.

"16" июля 2013 г. г. Ереван Регистрационный № 113110

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

---

REPUBLIC OF ARMENIA

Yerevan State University

(higher educational establishment)

# DIPLOMA

AB № 172691

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF

25 " May 2013

Nairi Adamyan

(first name, last name)

IS AWARDED THE BACHELOR'S DEGREE

of Management

IN THE FIELD OF

"Management"

Chairman of the State Examination Commission

Rector

Seal

"16" July 2013 c. Yerevan Registration № 113110

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարան
(բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը)

# ԴԻՊԼՈՄ

AM № 059899

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
մայիսի «25»-ի ՈՐՈՇՄԱՄԲ

Նաիրի Նորիկի Ադամյանին
(անուն, հայրանուն, ազգանուն)

ՇՆՈՐՀՎԱԾ Է
կառավարման
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԱՍՏԻՃԱՆ
«Կառավարում»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

02 նոյեմբերի 2017 թ. ք. Երևան Գրանցման № 133029

ԴԻՊԼՈՄԸ ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

---

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

Ереванский государственный университет
(наименование высшего учебного заведения)

# ДИПЛОМ

AM № 059899

РЕШЕНИЕМ ГОСУДАРСТВЕННОЙ ЭКЗАМЕНАЦИОННОЙ КОМИССИИ
от «25» мая 2017 года

Адамяну Наири Нориковичу
(фамилия, имя, отчество)

ПРИСУЖДЕНА СТЕПЕНЬ МАГИСТРА
менеджмента

ПО СПЕЦИАЛЬНОСТИ
"Менеджмент"

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

02 ноября 2017 г. г. Ереван Регистрационный № 133029

ДИПЛОМ ЯВЛЯЕТСЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОКУМЕНТОМ О ВЫСШЕМ ОБРАЗОВАНИИ

---

REPUBLIC OF ARMENIA

Yerevan State University
(higher educational establishment)

# DIPLOMA

AM № 059899

BY THE RESOLUTION OF THE STATE EXAMINATION COMMISSION OF
25 May 2017

Nairi Adamyan
(first name, last name)

IS AWARDED THE MASTER'S DEGREE
of Management

IN THE FIELD OF
"Management"

Chairman of the State Examination Commission

Rector

02 November 2017 c. Yerevan Registration № 133029

DIPLOMA IS THE STATE DOCUMENT OF THE HIGHER EDUCATION

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Նաիրի Նորիկի Ադամյանը
/անուն, հայրանուն, ազգանուն/

Անձը հաստատող փաստաթուղթ՝ __________, տրված՝ կողմից
/սերիա, համար/ /ամսաթիվ և ում կողմից/

բնակչության պետական ռեգիստրի տվյալներով հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այլ երկրի քաղաքացիության վերաբերյալ ԲՊՌ-ում նշում առկա չէ:

**ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության բնակչության պետական ռեգիստրի վարման բաժնի պետ**
**Վաղինակ Նիկողոսյան**

Recoverable Signature

X

ՎԱՂԻՆԱԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Signed by: NIKOGHOSYAN VAGHINAK 1105860361

Կ. Տ.

«16» 02 2026թ.

N 42/94/6/41052-26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՐԱԲԿԻՐԻ ԲԱԺԻՆ

„17" 02 „ 2026թ
N 3712-ԿԻ-33

375014ք. Երևան, Մամիկոնյանց 1
Հեռ. 23-02-02, 27-02-02
Ֆաքս 27-02-02

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Տրվում է ՀՀ քաղաքացի Նաիրի Նորիկի Ադամյանին, ծնված 17.08.1992թ., հասցե՝ առ այն, որ նա ըստ ՀՀ ՆԳՆ հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի տվյալների դատվածություն չունի, հետախուզման մեջ չի գտնվում:

Տրվում է ներկայացնելու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ Ռ. Ներսիսյան

# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ. (00374 10) 511-794, www.court.am*

№ ԴԴՎ-1 Ն-1006

«16» փետրվարի 2026թ.

**ՆԱԻՐԻ ՆՈՐԻԿԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Ադամյան,**

Ի պատասխան Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնում 16.02.2026թ. մուտքագրված Ձեր դիմումի՝ տեղեկացվում է, որ ըստ «Դատական համակարգ» տեղեկատվական համակարգչային ծրագրում առկա տվյալների (սկսած՝ 2008 թվականից)՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից Նաիրի Նորիկի Ադամյանին (ծնված՝ 17.08.1992թ., անձնագիր՝ ) անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դատական ակտեր չեն կայացվել:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**ԱՐՄԻՆԵ ԱԼԻԽԱՆՅԱՆ**

Դատական պրակտիկայի վերլուծության և
մշտադիտարկման վարչություն
Կատ.՝ Ա. Ասատրյան
Հեռ. (010) 511-821

**AMX** Central Depository of Armenia

3/1025-2026
16.02.2026

**Նաիրի Նորիկի Ադամյանին**

Հարգելի պարոն Ադամյան,

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲ ընկերության արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում 16.02.2026 թվականի դրությամբ Նաիրի Նորիկի Ադամյանի (անձնագիր՝ , նույնականացման քարտ՝ , ՀԾՀ՝ ) անվամբ արժեթղթեր գրանցված չեն, ինչպես նաև վերջին հինգ տարվա ընթացքում վերջինիս անվամբ արժեթղթերի նկատմամբ իրավունքների մասին տեղեկություններ առկա չեն[1]:

**Հարգանքով՝**

**Դեպոզիտար ծառայությունների վարչության ղեկավար, Գլխավոր տնօրենի տեղակալ** **Լևոն Կլեկչյան**

Կատարող՝ Հ Հայրապետյան
հեռ.՝ 060615555 / 234

---

[1] Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Ձեր կողմից տրամադրված տվյալների համադրումը Համակարգում առկա տվյալների հետ իրականացվում է համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության» կանոնների (https://cda.am/am/regulation/rules) 218-րդ կետի՝ հետևյալ կերպ. հարցվող անձի անվան (անվանման) և անձը հաստատող փաստաթղթի (պետական գրանցման) վերաբերյալ տվյալները համադրվում են Համակարգում առկա տվյալների հետ, և տվյալների բացակայության կամ անհամապատասխանության (ոչ ամբողջական համապատասխանության) դեպքում Կենտրոնական դեպոզիտարիայի պատասխան նամակում նշվում է, որ հարցվող անձի տվյալներով հաշվետեր Համակարգում գրանցված չէ:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ
Հասցե՝ Վ. Սարգսյան 26/1, 5-րդ հարկ,
Հեռ.՝ +374 60 61 55 55 | Էլ. հասցե՝ info@amx.am
ՀՀ, Երևան 0010 | www.cda.am

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ**
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3
Էլ.փոստ՝ stateregister@moj.am
Հեռ. +374 (10) 59-39-43
+374 (10) 20-14-37

Ել. N/25.8/7566-2026
«18» «փետրվարի» 2026թ.

**ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԻՐԻ ԱԴԱՄՅԱՆԻՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ

Համաձայն իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում 2026 թվականի փետրվարի 18-ի ժամը 09:45-ի դրությամբ առկա տեղեկությունների՝ **Նաիրի Նորիկի Ադամյանը** (անձնագիր՝ , ՀԾՀ՝) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում հաշվառված չէ որպես անհատ ձեռնարկատեր/վերջին 5 տարիների ընթացքում չի եղել և գրանցված որևէ ՍՊ ընկերության մասնակից չէ/ վերջին 5 տարիների ընթացքում չի եղել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործակալությունը միասնական պետական գրանցամատյանում գրառում է միայն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ: Բաժնետիրական ընկերությունների ռեեստր գործակալությունը չի վարում: Առևտրային կոոպերատիվների մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ միասնական պետական գրանցամատյանում չեն գրառվում», ***հետևաբար բաժնետիրական ընկերության***

***բաժնետերերի, ինչպես նաև կոոպերատիվի անդամների վերաբերյալ*** տեղեկությունների ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը չի տիրապետում:

X

**ԳՐԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ես՝ Նաիրի Ադամյանս, ծնված 1992 թվականի օգոստոսի 17-ին, ՀՀ քաղաքացի (անձնագիր՝ ) , սույնով հայտարարում եմ, որ որևէ քաղաքական կուսակցության անդամ չեմ հանդիսանում:

Հայտարարությունը տալիս եմ ներկայացման համար՝ «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան:

Հաստատում եմ, որ ներկայացված տեղեկությունը ճշգրիտ է:

Ամսաթիվ՝ 16.02.2026թ.

Ստորագրություն՝

Նաիրի Ադամյան

## ԳՐԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Նաիրի Ադամյանս, ծնված 1992 թվականի օգոստոսի 17-ին, ՀՀ քաղաքացի(անձնագիր՝ ), սույնով հայտարարում եմ, որ օրենքով սահմանված կարգով որևէ դատական կամ այլ իրավական ակտով զրկված չեմ որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

Հայտարարությունը տալիս եմ ներկայացման համար՝ «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխան:

Հաստատում եմ, որ ներկայացված տեղեկությունը ճշգրիտ է:

Ամսաթիվ՝ 16.02.2026թ.

Ստորագրություն՝ ____________

Նաիրի Ադամյան